այն մտանէր եւ ելանէր ի տուն կնոջն՝ եթէ ուղիղ մարդ էր։ Եւ նոքա ասեն թէ Ազգ էր. եւ նա ասէ. Զեմ հաւատար այդմ խօսից, քանզի ի զուր ոչ եղեալ այդպէս. եթէ ունիցի հոռոմդ դուստր, որդի և կին՝ առնիցեն դատախազութիւն արեան առն որ սպանաւ, և թէ ոչ է դուստր, կին եւ որդի՝ եւ ոչ լինի պարտ ի վերայ սորա արիւնն նորա, քանզի կարծեմ թէ գինեվաճառ կինն սիրառն է սպանելոյն։ Զայս ասացեալ եւ նա ի գուրս հանեալ զնոսա։

Բ չի օրս (6 Յ--լ-) ի մէջ Հօճա խանին ի ցերեկի օտա մի բացին հայոյ վաճառականի և գողացան զինչս ականց եւ այլ՝ մինչ ի Ռեշ մառչիլն[1]), եւ տէր ընչիցն գնացել ի վէզիրն եւ պատմել զեղեալն, եւ նա ետ հրաման հանդերձ չաւուշով զի գտցեն, եթէ ոչ բերցեն զնա առ նա. եւ բազում հնար արարեալ՝ ոչ հանեց գողն։

Դ չի (8 Յ--լ-). լըւեալ քաղաքս՝ ի սահմանս Սեաւ Ծովուն Ղազախն աւերեալ է մի երկու քաղաք։

Եւ Ե չի (9 Յ--լ-) առաւօտուս ղայմախամն եւ ամենայն մեծամեծքն խորհուրդ առեալ՝ թէ ո՛րպէս աբասցեն, քանզի ոչ կայր մի նաւ, այլ զնաւսն քարակրացն եւ զփոքր նաւսն որ ասի ղայեխ Ուսկիւտարու, նոքօք են եղեալ[2]) զղօրուճի և օթուրախ և եամախ ԲՌ։

Եւ վէզիրն ընդ նոսա գնաց առաւօտուս Զ չի (10 Յ--լ-), եւ երեկոյիս եկն. եւ իբրեւ[3]) մօտ եղեւ ի գուռս խանին, արք եւ պանդուխտք խանին որ են վաճառականք, ի յոտս նորա անկեալք՝ ծանուցանելով զաղէտս իրացն որ եղեն ի գողոյն, եւ մինչ ի տունն ընդ նմա երթեալք։ Եւ գնացեալ նորա նստաւ եւ արար դիւան. եւ տղայքն ասացին թէ Զմեզ ու-

1) մչլն. 2) եղեա. 3) եղեւ.